

դարէն սկսեալ պատմական դեր մը ունեցած են Սահառունիք: Իրենց բնակութիւնը կը թուի ըլլալ Շիրակի մէջ: Մուշկ, Բաս և Կարեև Սահառունիք կը յիշատակուին պատմութեան մէջ: Իսկ է. դարուն, Դաւիթ Սահառունին շինած է Մրենի հոյակապ եկեղեցին Շիրակի մէջ. և ան յիշատակներ ունեցած է շատ հետի տեղեր՝ որ չեն յիշատակուիր, նոյն իսկ Աղթամարի մէջ, ըստ Ալիշանի (Շիրակ, էջ 140): Սահառունեաց մասին կարելի է փոքր ի շատէ ծանօթութիւններ քաղել Ալիշանի Շիրակէն (էջ 141-142): Անհաւանական չեմ նկատեր Դաւիթ Սահառունիի վերագրել Յովսափատի Ս. Տեառնեղբոր վանքի վերաշինութիւնը, քանի որ ան կործանուած կրնար ըլլալ 614ի Պարսիկ արշաւանքներու ընթացքին: Թ — ԺԲ. դարուն կը յիշուի նոյն վանքը նոյն իսկ օտարներէն: Արար մատենագիր մը, Մուգատտարի 985ին կը գրէ թէ՛ Յովսափատը ծողկեալ ուխտատեղի մըն էր, պարտէզներով, այգիներով ու զարդարուած եկեղեցիներով, և կը յարէ թէ ճգնասուն վանականներ, ինչպէս Հայեր, Յոյներ եւ Ասորիներ խուցերու մէջ կը բնակէին եւ կը շէնցնէին Սելովամի արաբ զիւղալին ստորտը (Revue Biblique, 1919. էջ 493-495): Այս վանքը ԺԲ. դարուն, Սալահէտաինի և անոր յաջորդներուն արշաւանքներուն հետեանքով որչափ ալ կործանուած նկատենք, բայց քանի որ ունինք յիշատակարաններ, որ բոցայայտօրէն կը յիշեն այս վանքին գոյութիւնը մինչև ԺԵ. դար, կը տարուինք մտածել թէ Հայ միարանութիւնը կարողացած է նոյն արշաւանքներէն վերջ վերաշինել Ս. Տեառնեղբոր վանքը: Օտարներէն Ալլատիոս, Վատիկանի մատենագարանապետը (✠ 1669), իր Երուսաղէմի պատմութեան գրքին մէջ («L'art Syrien») Հ. Մկրտիչ Աւգերեանի, Հտ. 10. էջ 257) կը գրէ. «Ոչ կարի հետի է ի Ձորոյն Յովսափատայ վանք Սրբոյն Յակորայ աստուածեղբոր՝ բնակեալն ի Հայոց»: Մեր Ս. Յակորայ մատենագարանին (Թ. 1130) անթուական ձեռագիր «Աղթագրքի» մը մէջ, Մարկոս գրիչ հայ ուխտատեղիներու ընդօրինակեալ ցուցակի մը մէջ, Յովսափատի վանքերու շարքին կը յիշէ Ս. Տեառնեղբոր վանքը, ըսելով. «Եւ եկեղեցի մի Յակորայ առաքելոյն, որ եղեւ քարկոծեալ ի տաճարն». բայց ամէնէն բացայայտ վկայութիւնը կը գտնենք Ղալաթիոյ (Կ. Պոլիս) Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ զրհագիր «Գանձարան»ի մը յիշատակարանին մէջ, զոր ընդօրինակած